Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն Ու Մ 2

Ծրագիր՝ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման /ՏՏԵԶ/

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

ԱՄՄ No՝ TUR-15

Մարմաշենի վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում

Ի պատասխան № **TUR-15 «Մարմաշենի վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում»** շինարարական աշխատանքների գնման մրցույթի վերաբերյալ 2023թ. հունվարի 9-ին և 10-ին էլ.փոստով ստացված հարցումներին ներկայացնում ենք հետևյալ պարզաբանումները.

Հարց 1՝ «TUR-15 Մարմաշենի վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում մրցույթի սարքավորումների մեջ պահանջվում է ավտոկռունկ: Խնդրում ենք հստակեցնել մեխանիզմի բնութագիրը:»

Պատասխան՝

Ավտոկռունկն ինքնաշարժ սլաքավոր կռունկ է, կարող է գրունտային ճանապարհներով տեղաշարժվել բեռով կամ առանց բեռան, հաղթահարել մինչև 20° թեքությամբ բարձունքներ: Ավտոկռունկներն օգտագործվում են շինմոնտաժային, բարձման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ:

Հարց 2՝ «TUR-15 Մարմաշենի վանական համալիր տանող ճանապարհի հիմնանորոգում և հարակից տարածքի բարեկարգում մրցույթների հրավերում կա պահանջվող 3 (երեք) տարիների (2020-2022թթ.) ֆինանսական հաշվետվություն, սակայն 2022 թվականի ֆինանսական հաշվետվությունների վերջնաժամկետը 2023թվականի ապրիլի 20-ն է, ուստի այժմ ժամանակի առումով հնարավոր չէ ներկայացնել 2022թվականի ֆինանսական հաշվետվությունը:»

Պատասխան՝

Սույն մրցույթի շրջանակներում ֆինանսական հաշվետվությունների ներկայացման վերջնաժամկետ չի սահմանվում /փաստաթղթերի ներկայացման ժամկետները և կարգը նշված են մրցութային փաստաթղթում/: Ուստի, անհրաժեշտ է ներկայացնել սույն մրցութային փաստաթղթի «Ֆինանսական վիճակ և կատարողական» Ձևաթուղթ FIN–3.1., «Ֆինանսական փաստաթղթեր» կետ 2.-ի պայմաններին բավարարող ֆինանսական հաշվետվությունները:

ՀՏՋՀ գնումների բաժին
12 հունվարի 2023թ.